ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 47/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Քլինլայն» ՍՊԸ-ի 23.12.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-47/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը, գնման գործընթացին մասնակցելու նպատակով «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացրած ծրարը, Պատվիրատուի 26.12.2014թ. N 01/1080 գրությունը և ԳԲԽ-47/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 27.12.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

23.12.2014թ. ներկայացրած բողոքով «Քլինլայն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգով (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտերի բացման նիստը տեղի է ունեցել Պատվիրատուի վարչական շենքում՝ 17.12.2014թ. ժամը 11:00-ին:

Ընկերությունը տեղեկացրել է, որ հրավերով սահմանված կարգով նախապատրաստել է գնման ընթացակարգին մասնակցելու փաթեթը՝ հայտը ներառելով Ա4 ձևի ծրարում, և հայտերի բացման նիստից րոպեներ առաջ ՀՀ գնումների մասին օրենսդրությանը համապատասխան ներկայացրել է գնումների համակարգող Ա. Մակարյանին:

Ա.Մակարյանի և Ընկերության ներկայացուցչի կողմից արձանագրվել է, որ փաթեթը ներկայացվել է հրավերով սահմանված ժամկետում, ծրարի դարձ երեսին՝ փակման մասում, առկա են Ընկերության տնօրենի ստորագրությունը և Ընկերության կնիքը, և գնումների համակարգողը պահանջել է, որպեսզի Ընկերության ներկայացրած ծրարի մյուս 3 կողմերն էլ նույն կարգով ստորագրվի և կնքվի:

Ա.Մակարյանը գնահատող հանձնաժողովի նախագահի հետ խորհրդակցելուց հետո բանավոր հայտարարել է, որ ներկայացված հայտը /փաթեթը/ չի կարող ընդունվել, քանի որ չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: Ընկերության ներկայացուցիչը պահանջել է, որպեսզի արձանագրվի, թե ներկայացված հայտը /փաթեթը/ կոնկրետ ինչ օրենսդրական դրույթների հիման վրա չի համապատասխանում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին: Գնումների համակարգողն Ընկերության ծրարի վրա գրառել է. «Ծրարը «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի կողմից չի ընդունվում, քանի որ չի համապատասխանում ՀՀ «Գնումների մասին» օրենքի պահանջներին, մասնավորապես չի համապատասխանում Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջներին» և ստորագրել է կատարած գրառումը: Ընկերության ներկայացուցչի խնդրանքով գնումների համակարգողը մանրամասնել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջը: Ըստ Ա.Մակարյանի՝ Ընկերության ներկայացրած ծրարի երեսին, ձախից վերևի անկյունում, 4-րդ տողում նշված «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառակապակցությունում բացակայում են չակերտները, ինչի պատճառով ծրարը վերադարձվում է, հետևաբար՝ մասնակցության հայտը չի ընդունվում:

Ընկերությունը, վկայակոչելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 23-րդ հոդվածը, 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 30-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերը, 45-րդ հոդվածը, 48-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 10-րդ մասերը, 49-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 14-րդ և 18-րդ կետերը, ՀՀ Սահմանադրության 5-րդ, 18-րդ հոդվածները, 31.1-րդ և 42.1-րդ հոդվածները, 47-րդ հոդվածի 1-ին պարբերությունը և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասը, բողոքում նշել է, որ Պատվիրատուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ սահմանափակելով գնման բաց ընթացակարգին մասնակցելու Ընկերության իրավունքը հետևյալ հիմնավորմամբ.

1. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին համապատասխան Պատվիրատուն իրավունք չուներ սահմանափակելու Ընկերության հիշյալ գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը, քանի որ սահմանափակման իրավունքն օրինաստեղծը վերապահել է բացառապես կառավարությանը, եթե այն բխում է ազգային անվտանգության և պաշտպանության շահերից, հետևաբար՝ Պատվիրատուն խախտել է մյուս մասնակիցների հետ հավասարապես գնման գործընթացին մասնակցելու Ընկերության իրավունքը:

2. Օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ Պատվիրատուի կողմից ձևավորված գնահատող հանձնաժողովը, ի թիվս այլ լիազորությունների, իրավունք է ունեցել նաև բացել և գնահատել հայտերը, իսկ գնումների համակարգողը /քարտուղարը/ իրավունք է ունեցել ստանալ և հաշվառել հայտերը, սակայն գնումները համակարգողը /քարտուղարը/ հայտը ստանալու և հաշվառելու փոխարեն իրեն իրավունք է վերապահել գնահատող հանձնաժողովի լիազորությունը, այսինքն՝ գնահատել է Ընկերության ներկայացրած հայտը՝ նշելով, որ հայտը չի համապատասխանում Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջին և Պատվիրատուի կողմից այն չի ընդունվում:

3. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերին համապատասխան՝ ամբողջ փաստաթղթերը պետք է դրվեին ծրարի մեջ և սոսնձվեին Ընկերության կողմից, մինչդեռ՝ գնումների համակարգողն Ընկերության ներկայացուցչից պահանջել է նաև ստորագրել և կնքել ներկայացված ծրարի մնացած 3 /երեք/ կողմերը, իսկ քանի որ փաստաթղթերը ծրարի մեջ դնելու կողմն արդեն ստորագրված և կնքված է եղել Ընկերության կողմից, ուստի Պատվիրատուի գնումների համակարգողը ոչ իրավաչափ պահանջ է ներկայացրել Ընկերության ներկայացուցչին՝ դրանով իսկ հենց սկզբից խոչընդոտներ ստեղծելով Ընկերության մասնակցությանը գնման գործընթացին:

4. Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի մեկնաբանությունը ենթադրում է, որ «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը չակերտների մեջ նշանակում է, որ չբացել մինչև հայտերի բացման նիստը բառակապակցությունը պետք է օգտագործվի տառացիորեն, այսինքն՝ նշված կոնկրետ 5 բառից բաղկացած բառակապակցությունը նույնական պետք է օգտագործվի գնման մասնակիցների կողմից, բայց ոչ պարտադիր պահանջ միայն չակերտների մեջ, քանի որ լեզվական իմաստով չակերտների մեջ գրված բառերը կամ բառակապակցություններն

ընդամենը նպատակ ունեն իրավակիրառողների կողմից դրանց կիրառման նույնականությունը ապահովել, այլ ոչ թե դրանց հոմանիշները, հոլովված ձևերը և այլն:

5. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 7-րդ մասերին համապատասխան՝ ի թիվս այլ լիազորությունների, գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում հրապարակվում են նաև տեղեկություններ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, սակայն Պատվիրատուի գնումների համակարգողն իրեն վերապահելով գնահատող հանձնաժողովի իրավասությունները, հայտը գնահատել է ինքնուրույն, միանձնյա, ծրարը չի ընդունել, իսկ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստում արդեն չի հրապարակել նման տեղեկություններ, քանի որ նպատակ է ունեցել ոչ հավասար պայմաններ ստեղծել հնարավոր բոլոր մասնակիցների միջև, թեև օրենսդրությամբ ենթադրվում է բացարձակ հակառակ իրավական գործողություններ:

6. Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն, Ընկերությունն իրավունք ունի բողոքարկել պատվիրատուի, ...գործողությունները (անգործությունը) և որոշումները: Պատվիրատուի անունից տվյալ գնման ընթացակարգում հանդես է եկել գնումների համակարգողը, որի անօրինական, կամայական գործողությունները վատթարեցրել են Ընկերության իրավական վիճակը, այն է՝ Ընկերությունը զրկվել է գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայություններ ձեռք բերելու իրավունքից:

7. ՀՀ Սահմանադրությամբ յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ իրավաբանական անձինք, իրենց իրավունքներն ու ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք ունեն, և պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ, իսկ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ:

Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար

լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, այսինքն՝ գնումների համակարգողը չի առաջնորդվել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և լիազորված չի եղել ու նման իրավասություններ չունենալով խախտել է նաև բարձրագույն իրավաբանական ուժով օժտված սահմանադրական նորմերը, դրանով իսկ ստեղծելով այնպիսի իրավական վիճակ, որով ոտնահարվել է Ընկերությանը վերապահված մի շարք վերը նշված սահմանադրական դրույթներ:

8. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված՝ «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, տառացի նշանակությամբ մեկնաբանվում է, որ Ընկերությունը գնման հայտի ծրարի վրա նշելով՝ չբացել մինչև հայտերի բացման նիստը բառակապակցությունը, այն իրավաչափ է կիրառել, քանի որ այդ դրույթը չակերտների մեջ տառացի նշանակում է նույնական կիրառման ձև կոնկրետ հանգամանքներում, ինչն էլ Ընկերության կողմից փաստացի կատարվել է և ծրարի վրա նույնությամբ գրառվել է, իսկ գնումների համակարգող Ա.Մակարյանի զանցանքի արդյունքում Ընկերությունն ապօրինաբար զրկվել է իր իրավունքների և ազատությունների իրականացման օրենսդրական հնարավորություններից՝ իր կամքից անկախ հայտնվելով անհավասար պայմաններում՝ գնման հնարավոր մյուս մասնակիցների շարքում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել Պատվիրատուի կողմից սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով ընթացակարգը մինչև վերջնական որոշում կայացնելը, դադարեցնել ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը չընդունելու վերաբերյալ որոշումը և Ընթացակարգը հայտարարել չեղյալ:

<u>2. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

«Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը 26.12.2014թ. N 01/1080 գրությամբ «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ «Քլինլայն» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել փաթեթի ներկայացման կարգի՝ ծրարը վերադարձնելու և շտկելու մասին, սակայն մասնակցին տեղում մանրամասն պարզաբանվել է «ԵՊՀ»

ՊՈԱԿ-ի դիրքորոշումը ծրարների ներկայացման կարգի վերաբերյալ, մասնավորապես հայտնվել է, որ ծրարը բոլոր անկյուններից կնքելը և ստորագրելը բխում է մասնակիցների իսկ շահերից: Ավելին, ծրարի շտկման պահանջը ներկայացվել է հայտերի բացման նիստի վերջնաժամկետից բավականին առաջ, ինչը խնդիրներ չի առաջացրել մրցույթին հետագա մասնակցության համար, մինչդեռ՝ նման դժգոհություն կամ օրենքին լիովին իրազեկված լինելու դեպքում ներկայացուցիչը պարտավոր էր մինչև շտկում կատարելը իրազեկվել ծրարի ներկայացման կարգին, իսկ համաձայն չլինելու դեպքում հիմնավորում ներկայացներ և տեղում «ահազանգեր» համապատասխան մարմիններին, ինչը չի կատարել, որն էլ ապացուցում է նրա համաձայն լինելը, քանի որ ներկայացուցչի կողմից այդ կապակցությամբ առարկություն չի գրանցվել:

Պատվիրատուն վերոնշյալ գրությամբ հայտնել է, որ երկրորդ արձանագրված անհամապատասխանությունը, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի խախտումը, ինչը հանդիսացել է «Քլինլայն» ՍՊԸ-ի հայտի մերժման պատճառը, քարտուղարի կողմից արձանագրվել է մինչ ծրարը գրանցամատյանում գրանցելը, ով առաջնորդվել է իրեն վերապահված իրավունքներով: Վերջինս իրազեկել է պատվիրատուի ղեկավարին, ով տվյալ պարագայում հանդիսացել է աշխատակազմի ղեկավարը և հանձնաժողովի նախագահը (Կարգ 12-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական կառավարման մարմիններում՝ մարմնի աշխատակազմի ղեկավարն է, եթե տվյալ մարմինն ունի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ):

Արձանագրված անհամապատասխանության մասին Պատվիրատուն տեղեկացրել է «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացուցչին, ով չի օգտվել իր իրավունքից՝ տեղում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը, այլ համաձայնել է պատվիրատուի ղեկավարի որոշման հետ և քարտուղարին խնդրել է պարզապես ծրարի վրա նշել մերժման հիմքը, ինչը և արվել է:

Ինչ վերաբերում է «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը չակերտների մեջ ներառելուն, ապա Պատվիրատուն նշել է, որ առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով, որտեղ հստակ շարադրված է ծրարի լրացման կարգը, իսկ եթե դա լեզվական մեկնաբանության դաշտ տեղափոխվի, ապա ինչու ծրարի լրացման կարգի մեջ լրացման ենթակա նախադասությունները կամ

բառակապակցությունները բոլորը չակերտների մեջ ներառված չեն, օրինակ՝ ընթացակարգի ծածկագիրը ինչու նույնպես ներառված չէ չակերտների մեջ, որպեսզի հստակ շարադրվի մասնակցի կողմից, այլ չակերտների մեջ է առնված միայն «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը:

«Քլինլայն» ՍՊԸ-ի մեկնաբանությունն օրենքի ոչ մի կետով չի տրված և չի կարող օրենքի ուժ ունենալ:

Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) բաց ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Պատվիրատուն հայտնել է, որ ինչ վերաբերում է որևէ մասնակցի իրավունքների սահմանափակմանը, ապա մերժման հիմքում ընկած է օրենքի խախտումը, այլ ոչ թե մրցույթին մասնակցելու սահմանափակումը, ինչպես բողոքում նշել է բողոքարկող կազմակերպությունը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Ըստ Պատվիրատուի՝ «Քլինլայն» ՍՊԸ-ն մի շարք հողումներ է կատարել ՀՀ սահմանադրությունից, սակայն վերոնշյալ գրությունում Պատվիրատուն հարկ է համարել նշել նաև, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, «Գնումների մասին» ՀՀ օրենքից և իրավական այլ ակտերից, որոնք չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը:

3. ԳԲԽ-47/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 27.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Քլինլայն» ՍՊԸ-ի 23.12.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-47/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-47/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Քլինլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտ պարունակող ծրարը գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից չի ընդունվել և նույնությամբ վերադարձվել է պատճառաբանությամբ, որ ծրարը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջին, քանի որ ծրարի վրա նշված «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառակապակցությունն Ընկերության կողմից գրվել է առանց չակերտների: Վերոհիշյալի վերաբերյալ քարտուղարը Ընկերության ծրարի վրա կատարել է գրառում. «Ծրարը «ԵՊՀ» ՊՈԱԿ-ի կողմից չի ընդունվում, քանի որ չի համապատասխանում ՀՀ «Գնումների մասին» օրենքի պահանջներին, մասնավորապես՝ 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ ենթակետի պահանջներին» և ստորագրել է կատարած գրառումը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Քննելով «Քլինլայն» ՍՊԸ-ի 23.12.2014թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման մասնակի հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից:

Վերը նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ:

Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ քարտուղարը ստանում և հաշվառում է հայտերը:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ Օրենքի 27-րդ հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը (ծրարը) մերժելու և նույնությամբ վերադարձնելու իրավասությունը վերապահված է միայն գնահատող հանձնաժողովին, որն այդ լիազորությունն իրականացնում է հայտերի բացման նիստում: Մինչդեռ, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտը ստանալու և հաշվառելու փոխարեն այն չի ընդունել՝ ծրարը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջին չհամապատասխանելու հիմքով, որով իրականացրել է Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով գնահատող հանձնաժողովին վերապահված լիազորությունը:

Նման պայմաններում, գնահատող հանձնաժողովի քարտուղարը, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ վերադարձնելով «Քլինլայն» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, սահմանափակել է գնման գործընթացին Ընկերության մասնակցության իրավունքը՝ խախտելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ հոդվածով սահմանված պահանջները, ինչը հիմք է «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը դադարեցնելու համար:

Ինչ վերաբերում է ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը չընդունելու վերաբերյալ Պատվիրատուի որոշումը դադարեցնելու բողոքաբերի պահանջին, ապա այն ենթակա է մերժման, քանի որ գնման ընթացակարգի ընթացքում նման որոշում չի կայացվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Քլինլայն» ՍՊԸ-ի 23.12.2014թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի: Դադարեցնել «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից սանիտարական մաքրության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգի միջոցով գնում կատարելու ընթացակարգ հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը:

2. «Քլինլայն» ՍՊԸ-ի բողոքը՝ «ԵՊՀ-ԲԸԾՁԲ-14/82» ծածկագրով բաց ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության ներկայացրած հայտը չընդունելու վերաբերյալ կայացված որոշումը դադարեցնելու մասով, մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ազգանուշ Ֆրանգյան**

Անդամ՝ **Ավագ Ավագյան**